ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 4-Ի ՀԵՐԹԱԿԱՆ (ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ) ՆԻՍՏԻ

ք. Երևան **10 փետրվար 2020թ.**

2020 թվականի փետրվարի 10-ին ժամը 11:00-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ Կառավարման խորհուրդ) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Կառավարման խորհրդի նախագահ՝ Ֆելիքս Ցոլակյան ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարար

Կառավարման խորհրդի անդամներ՝

Ս.Պապիկյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Ա. Ասոյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Կ. Բրուտյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ա.Ավանեսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ա.Ղուլարյան	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի պարտականությունները ժամանակավոր կատարող
Ս. Թովմասյան	ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար
Ա. Դանիելյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչ:

Կառավարման խորհրդի նիստին չեն մասնակցել Կառավարման խորհրդի անդամներ՝

Ա. Պետրոսյան ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի տնօրեն

Ա. Կարապետյան «Զարգացման լուծումների ինստիտուտ» հիմնադրամի տնօրեն:

Կառավարման խորհրդի նիստին ներկա էին նաև՝ Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի թեկնածու Ա. Պապիկյանը, ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ Տ. Հակոբյանը, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ Ա. Պետրոսյանը, Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության պետ Գ. Գիլոյանը, Տեսչական մարմնի իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող բաժնի գլխավոր մասնագետ Ե. Զոհրաբյանը:

Քվորումն ապահովված էր:

Օրակարգն հաստատվելուց առաջ Կառավարման խորհրդի անդամ՝ ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար Ս. Թովմասյանը առաջարկեց օրակարգում ավելացնել 2-րդ հարց՝ հողամասերի չափագրության նկատմամբ Տեսչական մարմնի կողմից վերահսկողության իրականացման հնարավորությունների վերաբերյալ օրենսդրական փոփոխության անհրաժեշտության վերաբերյալ: Օրակարգի երկու հարցերը հաստատվեցին Կառավարման խորհրդի անդամների կողմից:

Օրակարգն հաստատելուց հետո, կառավարման խորհրդի անդամներին ներկայացվեց Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի թեկնածու Ա. Պապիկյանը: Կառավարման խորհրդի նախագահը դիմեց խորհրդի անդամներին՝ առաջարկելով իրենց հարցերն ուղղել թեկնածուին:

Կառավարման խորհրդի անդամ Ա. Ասոյանը Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի թեկնածուին հարցրեց, իր թեկանածության առաջադրման նպատակների մասին և թե ինչու է թեկնածուն իր նախկին աշխատանքից հետո նախընտրել Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի աշխատանքը:

Ա. Պապիկյանը պատասխանեց, որ Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտների կարևորության, իրավական ակտերի և դրանց պատշաճ կիրառելիության ապահովման վերաբերյալ տեղեկատվությանը տիրապետում է և, որ իր համար այն պատասխանատու և կարևորված աշխատանք է համարում: Պատրաստ է ստանձնել պատասխանատվություն և Տեսչական մարմնի կողմից վերահսկող ոլորտներում բնականոն աշխատանքի ապահովման գործում ունենալ իր մասնագիտական ներդրումը: Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի

թեկնածու Ա. Պապիկյանը հայտնեց նաև, որ նախկինում աշխատել է ՀՀ վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչի տեղակալ:

Կառավարման խորհրդի նախագահ Ֆ. Ցոլակյանը թեկնածուի խոսքից հետո ևս մեկ անգամ հավաստեց, որ Տեսչական մարմնի վերահսկողությանը հանձնված ոլորտները կարևոր և պատասխանատու են և ուղղակիորեն կապված են բնակչության անվտանգության ապահովման հետ: Միևնույն ժամանակ ողջունեց թեկնածուի պատրաստակամությունը, Տեսչական մարմնի վերրահսկողությանը վերապահված ոլորտներում հետևողական և պատասխանատու աշխատանքային մոտեցումը:

Հարցուպատասխանից հետո, կառվարման խորհրդի անդամ Ա. Ասոյանի առաջարկով թեկնածուն դուրս եկավ կառավարման խորհրդի նիստի աշխատասենյակից, որից հետո կառավարման խորհրդի նախագահը թեկնածուին հավանություն տալու հարցը դրեց քվեարկության:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑ

1. ՀՀ վարչապետին ներկայացնելու նպատակով հավանություն տալ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության Տեսչական մարմնի տեղակալի պաշտոնում՝ Ա. Պապիկյանի թեկնածությանը:

Քվեարկության արդյունքում՝

1. Ֆելիքս Ցոլակյանը քվեարկեց կողմ,
2. Ս.Պապիկյանը քվեարկեց կողմ,
3. Ա. Ասոյանը քվեարկեց կողմ,
4. Կ. Բրուտյանը քվեարկեց կողմ,
5. Ռ. Գրիգորյանը քվեարկեց կողմ,
6. Ա. Ավանեսյանը քվեարկեց կողմ,
7. Ա.Ղուլարյան քվեարկեց կողմ,
8. Ս. Թովմասյանը քվեարկեց կողմ,
9. Ա. Դանիելյանը քվեարկեց կողմ,
10. Սարգիս Թովմասյանը քվեարկեց կողմ:

Քվեարկությունը համարվեց կայացած:

Քվեարկության արդյունքները՝

Հարց 1-ին՝ 10 կողմ, 0 դեմ:

Քվեարկության ավարտից հետո, նիստերի աշխատասենյակ հրավիրվեց Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի թեկնածու Ա. Պապիկյանը: Կառավարման խորհրդի նախագահը հայտնեց, որ Կառավարման խորուրդը հավանություն է տվել իր թեկնածությանը և որ սահմանված ընթացակարգով թեկնածուի առաջադրման վերաբերյալ կառավարման խորհրդի որոշումը կներկայացվի ՀՀ Վարչապետին:

Կառավարման խորհրդի անդամ՝ ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավար Ս. Թովմասյանը, օրակարգի 1-ին հարցի ավարտից հետո, նախագահողի թույլտվությամբ ներկայացրեց օրակարգի 2-րդ հարցը՝ խոսեց հողամասերի չափագրման վերաբերյալ Տեսչական մարմնի՝ որպես ոլորտային վերահսկողություն իրականացնող մարմնի ընդգրկման կարևորության խնդրի մասին: Ս. Թովմասյանը նշեց, որ մինչ 2012 թվականը ՀՀ կադաստրի կոմիտեն գործող իրավական կարգավորումների համաձայն, իր մասնագետների միջոցով իրականացրել է հողամասերի և շենք շինությունների չափագրման աշխատանքները: 2012 թվականից հետո Կադաստրի կոմիտեն համաձայն գործող օրենսդրության այլևս նման իրավասություն չունի, և չափագրման աշխատանքներն ամբողջությամբ իրականացվում է մասնավոր ընկերությունների կողմից: Արդյունքում ՀՀ կադաստրի կոմիտեն արձանագրել է, որ ոլորտում առկա է չափագրման արդյունքների արժանահավատության խնդիր և որ միշտ չէ, որ չափագրման արդյունքներն արտացոլում են օբյեկտիվ իրականությունը: Շենքերի, շինությունների, հողամասերի կադաստրային չափագրման աշխատանքներն համաձայն ՀՀ գործող օրեմնսդրության իրականացնում են որակավորված մասնավոր անձինք և որ չափագրման արդյունքների հավաստիության ստուգման գործընթացը չի վերահսկվում: Այս խնդրի կարգավորման համար Տեսչական մարմնի կանոնադրական գործառույթների իրականացումը կարևորվում է: Առաջարկը հիմնականում վերաբերվում է Տեսչական մարմնի կողմից չափագրման արդյունքները հավաստելու գործառույթի իրականացմանը:

Խնդրի հետ կապված կառավարման խորհրդի անդամ Ա. Ասոյանը հայտնեց, որ այս թեմայով քննարկումներ են ունեցել նաև կառավարման խորհրդի անդամ Ս. Պապիկյանի հետ և, որ ստեղծված իրավիճակում անհրաժեշտ է իրականացնել օրենսդրական բարեփոխումներ, կարևորելով հնարավորինս կոռուպցիոն ռիսկերի բացառումը:

Ս. Թովմասյանը հայտնեց, որ հարցի իրավական կարգավորման հետ կապված ՀՀ կադաստրի կոմիտեն նախատեսում է մշակել ՀՀ Կառավարության 2015 թվականի մարտի

19-ի N 596-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

Հարցի հետ կապված ելույթ ունեցավ Տեսչական մարմնի ղեկավար Գ. Շախբազյանը և հայտնեց, որ Տեսչական մարմինը իր վերահսկողության շրջանակներում ավարտական ակտերի տրամադրման գործընթացում փաստաթղթային և ակնադիտական հետազոտություն է իրականացնում նաև չափագրման արդյունքների հավաստիության նկատմամբ: Կառավարման խորհրդի անդամ Ս. Թովմասյանը հայտնեց, որ նման վերահսկողության անհրաժեշտություն առկա է մինչ ավարտական ակտի համար դիմելու ժամանակահատվածը, քանի որ խնդիրը տնտեսավարողի հետ առաջանում է փաստագրման փուլում: Կառավարման խորհրդի անդամ Ա. Ասոյանը առաջարկեց չափագրման արդյունքների և օբյեկտիվ իրականության անհամապատասխանությունների դեպքում հաղորդում ներկայացնել հանցագործության դեպքի մասին, որը կարող է հնարավորինս բացառել ոչ հավաստի չափագրման արդյունքներ ներկայացնելու դեպքերը: Ա. Ասոյանը նաև առաջարկեց ՀՀ Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը ներկայացնել Տեսչական մարմինների համակարգման գրասենյակ առաջարկություններ և դիտարկումներ ներկայացնելու նպատակով:

Տեսչական մարմնի ղեկավար Գ. Շախբազյանը հայտնեց, որ Տեսչական մարմինն ունի նման պրակտիկա, և որ չարաշահումների դեպքերով ՀՀ դատախազություն և իրավապահ մարմիններ ներկայացվել են հաղորդումներ՝ հողօգտագործման, քաղաքաշինության ոլորտներում չարաշահումների վերաբերյալ:

Կառավարման խորհրդի նախագահ Ֆ. Ցոլակյանը, առաջարկեց հարցը մեկ անգամ ևս քննարկել, և անհրաժեշտության դեպքում պատրաստել օրենսդրական փոփոխությունների նախագծեր:

Կառավարման խորհրդի անդամները կարևորելով բարձրացրած հարցը ընդունեցին ի գիտություն և պայմանավորվեցին օրակարգի 2-րդ հարցի լուծման համար առաջարկվող փոփոխությունները մանրամասն ուսումնասիրել և ներկայացնել դիրքորոշումներ հարցի սահմանված կարգով շրջանառության ընթացքում:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Կառավարման խորհուրդը որոշեց.

ՀՀ վարչապետին ներկայացնելու նպատակով հավանություն տալ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության Տեսչական մարմնի տեղակալի պաշտոնում՝ Ա. Պապիկյանի թեկնածությանը:

Կառավարման խորհրդի նախագահ՝

_____ Ֆ. Ցոլակյան
ստորագրություն

Կառավարման խորհրդի քարտուղար՝

_____ Ն.Մկրտչյան
ստորագրություն